

<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ հայտարարում է մրցույթ՝ Երևան քաղաքի մասնաճյուղերում Հաճախորդների սպասարկման և դրամարկղային գործառնությունների (ՀՄԴԳ) բաժնի գանձապահների ներգրավման համար

Աշխատատեղի անվանումը՝ ՀՄԴԳ բաժնի գանձապահ (Երևան քաղաքի մասնաճյուղեր)

Աշխատանքային պարտականություններ

- Ապահովում է դրամարկղի գործառնությունների հետ կապված աշխատանքների կատարումը
- Կատարում է դրամի այլ արժույթների կանխիկի մուտքի և ելքի գործառնությունները
- Կատարում է դրամարկղային գործարքներ, որոնք գերազանցում են սպասարկողների սահմանաչափերը
- Ստուգում է թղթադրամների ու մետաղադրամների իսկությունը, կեղծ թղթադրամների և մետաղադրամների հայտնաբերման դեպքում՝ տեղեկացնում է մասնաճյուղի կառավարչին
- Կատարում է թղթադրամների և մետաղադրամների դասավորում և փաթեթավորում
- Աշխատանքային օրվա ավարտին կազմում է հաշվետվություններ փաստաթղթաբանության հիման վրա՝ կապված ընդունված և հանձնված կանխիկ դրամական միջոցների հետ

Պահանջվող կրթություն և հմտություններ

- Բարձրագույն կրթություն
- Բանկային գործունեությունը կարգավորող օրենսդրության իմացություն
- Հաշվապահական հաշվառման իմացությունը կղիտվի որպես առավելություն
- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենքի իմացությունը կղիտվի որպես առավելություն
- Թիմային աշխատանքի, շփման և բանակցությունների վարման հմտություններ
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և հետևում
- Լարված աշխատանք կատարելու ունակություն, կոնֆլիկտների և սթրեսի կառավարման ունակություն
- Հաղորդակցման գերազանց հմտություններ
- Հայերենի գերազանց տիրապետում, անգլերեն և ռուսերեն լեզուների լավ իմացություն
- Համակարգչային գիտելիքների իմացություն

Դիմելու ընթացակարգը

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hr@armbusinessbank.am հասցեին:

Վերջնաժամկետ՝ 17.02.2023թ.:

Խնդրում ենք նամակի թեմա (subject) դաշտը լրացնել նշելով պաշտոնը և Ձեր անուն, ազգանունը հետևյալ կերպ՝ "Cashier, Yerevan – Name, Surname":

Մրցույթի անցկացման վայրը՝ "ՀԱՅԲԻԶՆԵՄԲԱՆԿ" ՓԲԸ Գլխավոր գրասենյակ,
ք. Երևան, Նալբանդյան 48: